

Հ. Բարթիկյան

ՊԱՎԼԻԿՅԱՆՆԵՐԻ ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ԾԱԳՈՒՄԸ ԸՍՏ
ՀԻՆ ԲՈՒԼՂԱՐԵՐԵՆ ՄԻ ՁԵՌԱԳՐԻ

Պավլիկյանների ծագման և տարածման մասին մեզ հասել են ավանդույթյուններ թե՛ հայերեն, թե՛ հունարեն և թե՛ հին բուլղարերեն լեզուներով:

Հայկական ավանդույթյունը գտնվում է «Գիրք հերձուածոց»-ի մեջ, ուր մենք կարդում ենք. «Ապա կին մի՝ Շեթի անուն, այնր (այսինքն ի պոլիկենաց) աղանդոյն, ելեալ զկնի թուրքացն եկն ի Հայս, և Պօղ ոմն յԱյրարատեայ գաւառէն, որ աշակերտեալ էր սրբոյն Եփրեմի, առեանկեաց զկինն և խառնակեցաւ աղանդ ընդ քրիստոնէութիւնս: Զարեգակն՝ Քրիստոս ասէին՝ ոչ մեռեալ և ոչ յարուցեալ. և վասն այնորիկ ծոմանան ի կիւրակէի: Եւ եկեալ սուրբն Եփրեմ ոչ կարաց քակել զնա յաղանդոյն, և անէծ զնա և զնացա՛ւ:

Հունական ավանդույթյունը, որը պահպանվել է 9-րդ դարի բյուզանդական հեղինակ Պետրոս Սիկիլիացու «Պավլիկյանների պատմութեան» մեջ, պավլիկյանների առաջացումը կապում է ոմն Կալլիսիկե անունով կնոջ հետ, որը լինելով մանիքեցի, իր երկու որդիներին՝ Պավղոսին և Հովհաննեսին Հայաստանի Սամոսատ (իմա՝ Արշամոշատ) քաղաքից ուղարկում է Պոնտոսի Ֆանարիայի² շրջանը որպես աղանդի քարոզիչներ: Ահա այդ կնոջ որդի Պավղոսի անունից էլ, ըստ ավանդության, մանիքեցիները ստանում են պավլիկյան անունը, իսկ նրանց աշակերտները մանիքեցիների փոխարեն կոչվում են պավլիկյաններ³:

Հայկական և հունական առասպելների կողքին մենք ունենում ենք սլավոնական առասպել՝ պավլիկյանների ծագման մասին: 1922 թվականին բուլղար պատմաբան Յորդան Բվանովը հրատարակեց մի ձեռագիր, գրված հին բուլղարերեն լեզվով, որը վերնագրված է «Սոսք Հովհաննեսի Ոսկերեբանի, թե ինչպես են առաջացել պավլիկյանները»⁴: Այդ առասպելը

¹ «Գիրք հերձուածոց», հրատ. Միսրան. «Արարատ», թիւ Բ., տարի ԻԵ, Վաղարշապատ, 1892, էջ 113:

² Ֆանարիայի մասին տես՝ *H. Gre'goire*.— Pour l'histoire des églises pauliciens, *Kainovog'orion du Pont, Episparis en Phénicie* „Orientalia Christiana periodica“, Vol. XIII, № 3—4 Roma, 1947. նաև *H. Gre'goire*.— Précisions géographiques et chronologiques sur les Pauliciens. *Bulletin de L'Académie royale de Belgique, Cl. des lettres, 5-ème Série, Tome XXIII*, 1947, p. 294 և հաջորդ:

³ *Pe:ri Siculi*. *Historia utilis et refutatio atque eversio haereseos manichaeorum qui et pauliciani dicuntur*, Migne, *Patrologia graeca*. t. 104, col. 1273 A. B. Պավլիկյան անվան ծագման մասին այլ, անհավանական բացատրություն է տալիս 9-րդ դարի պատրիարք Փոսր: Տես Migne, t. 102, col. 17. B.

⁴ *И. Ивановъ*, Пронсходъ на Павликянните споредъ два български ръкописа. Списание на Българската Академия на науките, книга XXIV, клонъ историко-филологиченъ и философско-общественъ, София, 1922.

գտնվում էր Կարլույա օկուլիայի Աջար գյուղում գտնվող պարականոն գրականութուն բովանդակող մի ձեռագիր մատյանի մեջ, իսկ այժմ գտնվում է (այսինքն՝ 1922 թվականին գտնվում էր) Սոֆիայի բուլղարական գրադարանում, № 326-ի տակ:

Այդ առասպելը մեզ հասել է նաև նոր բուլղարերեն խմբագրություն: Յ. Իվանովը, համեմատելով այդ երկու ձեռագրերը, գտնում է, որ վերջինը առաջինի բառացի վերարտադրությունն է և պարունակում է սխալներ: Առաջին ձեռագրում գտնվող հատուկ անունները որոշ փոփոխության են ենթարկվել երկրորդում:

1928 թվականին Յու. Յավորսկին հրատարակեց իր կողմից կարպատո-ուկրաական մի ժողովածուում հայտնաբերած մի փոքր առասպելական-պատմական հատված, որը Յավորսկու խոսքերով՝ «անսխալ կերպով միացնում է իր մեջ մի երևակայական դեպք եկեղեցու հայրեր Բարսեղ մեծի և Հովհաննես Ոսկերեբանի, ինչպես նաև ոչ պակաս խառնաշփոթ և անարժանահավատ պատմվածք Բուլղարիայում պավլիկյան աղանդի ծագման և զարգացման մասին»¹:

Համեմատելով Յավորսկու 1928 թվականին հրատարակած ձեռագիրը Իվանովի 1922 թվականին հրատարակած ձեռագրի հետ, դժվար չէ նկատել, որ Յավորսկին իր ձեռքի տակ ունեցել է ոչ թե հին բուլղարերեն տեքստը, այլ վերջինիս նոր բուլղարերեն վերարտադրությունը, որի մասին խոսում է Իվանովը, բայց այն չի հրատարակել, քանի որ ունեցել է նրա սկզբնաղբյուրը, որը և հրատարակել է: Իմիջիայլոց պետք է ասել, որ Յավորսկին չգիտե իր հրատարակած ձեռագրի սկզբնաղբյուրը, այսինքն նրան անձանթ է մնացել Իվանովի հոգվածը: Համենայն դեպս նա արել է այն միանգամայն ճիշտ ենթադրությունը, թե «մի բան կասկածից վեր է, որ մեր (իր հրատարակածը — Հ. Բ.) ուշ կարպատո-ուկրաական տեքստը հանդիսանում է պատահական՝ առավել կամ պակաս չափով տեղական բարբառին հարմարեցված, արտագրություն ավելի հին եկեղեցական-սլավոնական և հավանաբար միջին բուլղարերեն տեքստից, որի մասին ակներև վկայում են որոշ լեզվական և հատկապես ուղղագրական վերապրուկներ»²:

Այսպիսով, քանի որ Յավորսկու հրատարակած ձեռագիրը հանդիսանում է ոչ սկզբնականը, կանգ ենք առնում Յ. Իվանովի հրատարակած ձեռագրի վրա, որը, անկասկած, հայագիտության համար ներկայացնում է ոչ պակաս հետաքրքրություն:

**«ՆՈՍՏՐ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՈՍԿԵՐԵՐԱՆԻ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՌԱՋԱՅԵԼ
ՊԱՎԼԻԿՅԱՆՆԵՐԸ**

Սատանան, ստանալով շատ գեղեցիկ, իմաստուն, ցածր ու հանդարտ խոսող, համեստ և շատ հնազանդ մի գրագրի կերպարանք, գալիս է Կապադովկիա, սուրբ Բարսեղի մոտ և ասում նրան. «Ընդունիր ինձ, հայր, և

¹ Ю. Яворский, Легенда о происхождении павликиан. Сборник отделения русского языка и словесности Академии наук СССР, том 101, № 3, Ленинград, 1928, стр. 503.

² Նույն տեղում, էջ 506—507:

ես կլինեմ քո հետ: Մուրր Բարսեղը տեսավ նրա շատ գեղեցիկ գրվածքը, ինչպես նաև նրա ամբողջ հնազանդութունը և շատ ուրախացավ նրա համար, քանի որ ինքը չգիտեր, թե նա սատանա է: Սատանան ուզում էր հրապուրել սրբին: Մուրր Բարսեղը նրան սիրեց, ավելի նրան բոլոր գրքերը, իսկ նա սուրբ Բարսեղի սանը սկսեց գրել և գրեց մի մեծ գիրք: Նա մարդկանցից երկու աշակերտ վերցրեց իր մոտ: Բարսեղը շատ էր ուրախանում նրանով և ասաց նրան. «Ո՞վ գրագիր, քո ձեռքով գրիր մի նամակ, որ ուղարկենք մեր պատրիարք Հովհաննես Ոսկերեբանին: Թող նա տեսնի, թե ես ինչպիսի գրագիր ունեմ, առավել ևս երբ տեսնի նրա գեմքի գեղեցկութունը շատ կսիրե նրան»:

Ոսկերեբանը հենց որ նամակը վերցրեց իր ձեռքը հասկացավ, որ դա սատանայական է: Նա պատասխանում է սուրբ Բարսեղին և ասում. «Ճշմարիտ, լավ գրագիր ունես, ես էլ գալիս եմ տեսնեմ նրան»: Վեր կացավ սուրբ Հովհաննեսը, իր բոլոր ծառաների հետ, վերցրեց իր հետ բոլոր եկեղեցական նվերները և եկավ Կապադովկիա, սուրբ Բարսեղի մոտ: Բարսեղն ասաց. «Ո՞վ տեր Հովհաննես, ուզում ես բերեմ այստեղ իմ գրագրին, որ տեսնես նրան»: Հովհաննեսն ասում է՝ բեր: Բարսեղը նրան բերեց և Հովհաննեսը տեսավ շատ գեղեցիկ սատանային: Հովհաննեսը ամեն ինչ հասկացավ: Ինչո՞ւ նա եկեղեցի, կանգնեց սուրբ սեղանի առաջ և սկսեց լաց լինել ասելով. «Տեր Հիսուս Քրիստոս, աստված մեր, ուղարկիր մեզ քո երկնային ուժը, որ քրե՞նք այս սատանային»: Եվ նա ասում է. «Ո՞վ Բարսեղ, ո՞չ մի տեղ չկա այսպիսի գրագիր, ինչպիսին է քոնը»: Մուրր Հովհաննեսը սկսեց պատարագը, կանչելով սատանային եկեղեցի, ներս բերեց եկեղեցական նվերները, փակեց եկեղեցին և կնքեց այն աստրժո անունով: Երբ նա սկսեց կարգալ սուրբ Ավետարանը, այն ժամանակ սատանան սկսեց աջ ու ձախ զարնվել: Տեսավ այդ Բարսեղն ու վախեցավ: Երբ տալիս էր սուրբ հազորդութունը, սատանան սարսափելի դարձավ: Նա հարվածեց եկեղեցական նվերներին, որոնք գետին ընկան: Բոլոր մարդիկ խելքը կորցնում էին, իսկ սուրբ Հովհաննեսը սրտապնդում էր նրանց: Երբ նա ասում էր «Ճշմարիտ Աստվածածին», սատանան զայրացավ, իսկ երբ ասում էր «Հայր մերը» սատանան լցրեց եկեղեցին զորությամբ, և տեղ չկար, որ մարդիկ տեղավորվեին: Իսկ երբ նա ասաց «մի սուրբ, մի տեր», այն ժամանակ սատանան պայթեց: Երբ եկեղեցուց դուրս էին գալիս, Հովհաննեսը ասում է. «Տեսար, Բարսեղ, քո գրագրին: Ոչ միշտ, հայր, ամեն մի բան (գործ) ընտրել է և գեղեցիկ: Չնայած մարդկայինի նման է, բայց էություն սատանայական է»: Եվ հավաքելով սատանայի բոլոր գրքերը կրակ տվեց: Ասաց Բարսեղը Հովհաննեսին. «Ինչպես վարվենք նրա երկու աշակերտների հետ»: Հովհաննեսն ասաց. «Նրանք քրիստոնյայի որդիներ են: Նրանց պահպանենք, մինչև որ կանցնեն քրիստոնեական ճանապարհի վրա»: Նրանցից մեկի անունը Սուբոտին էր, մյուսինը՝ Շուաիլ, իսկ սատանայի անունն էր Պայլ: Սատանայի այդ երկու աշակերտները վեր են կենում և Կապադովկիայից գալիս են բուլղարական երկիրը, ստանալով առաքելական Պողոս և Հովհաննես անունները և սկսում են գրքերով սովորեցնել մարդկանց: Ովքեր ընդունում են նրանց վարդապետությունը կոչվում են պավլիկյաններ և փառաբանում են Պողո-

սին: Կսկիծով փնտրում էր նրանց Հովհաննես Ոսկեբերանը: Նա դուրս եկավ Կոստանդնուպոլսից և մտավ Պետրիչ, ուր նրան երևաց սուրբ Աստվածածինը, թագը հագած, ինչպես երկնի և երկրի թագուհի: Հետո Հովհաննեսը ոտք դրեց բուլղարական հողը: Սուրբ Հովհաննեսը հրամայեց քերթել նրանց կաշին, քանի որ նրանց կաշին մկրտված էր: Պավլիկյաններին թվում էր, թե շարշարվում են սրբերի պես: Այսպիսով, պավլիկյան են կոչվում նրանք, ովքեր ընդունել են այդ թշնամական վարդապետությունը: Սուրբ Ոսկեբերանն ասում է. «Նդովյալ լինեն այդ մարդիկ և նրանց ուսուցիչները: Մեր աստծուն փառք»:

* * *

Ավելորդ չէ ասել, որ 4-րդ դարի եկեղեցական «հայրերի»՝ Բարսեղի և Հովհաննես Ոսկեբերանի հիշատակումը այս առասպելի մեջ ոչ մի կապ չունի պավլիկյան շարժման հետ, մի շարժում, որ սկսվեց տարածվել Հայաստանում և Եյուզանդիայում նրանցից ավելի քան երկու հարյուր հիսուն տարի անց: Նրանք պարզապես հանդես են գալիս այս առասպելի մեջ, որպեսզի նրան տան ավելի հեղինակություն և արժեք, մի բան, որ երկու հրատարակիչներն էլ՝ և Բվանովը, և Յավորսկին նշել են: Այդ նույն բանին ենք հանդիպում նաև հայկական առասպելի մեջ: Այնտեղ նույնպես հանդես է գալիս վերոհիշյալ երկու «հայրերի» ժամանակակից մի «հայր»՝ սուրբ Եփրեմը:

Այս առասպելական պատումի մեջ հիշատակվում է Պետրիչը, այսինքն Աստվածածինն ընկրված Բաչկովոյի վանքը Թրակիայի Ֆիլիպպոպոլիս քաղաքում, որը կառուցվել է հրիդոր Բակուրյան իշխանի կողմից, 1083 թվականին¹, այնպես, որ առասպելը չէր կարող առաջացած լինել (ներկա վիճակում) 12-րդ դարից առաջ:

Թրակիան այն շրջանն էր, ուր գլխավորապես բռնագաղթեցվում էին հայ ազանդավորները դեռևս Կոստանդին 5-րդի կողմից, 8-րդ դարի կեսերին, 756 թ.: Այդ կայսրը, արարների դեմ մղած հաղթական պատերազմներից հետո, հայ ազանդավորների զանգվածներ Թեոդոսուպոլսից (Կարին) և Մելիտինեից տեղափոխում է Թրակիա, նրանց ապահովելով տներով ու հողարածիններով²: Տեղափոխված հայերը այդ շրջաններում ռազմական ծառայություն էին կատարում, որի մասին մենք մի վկայություն ենք հանդիպում բյուզանդական սրբերի վարքերում³:

Հայ ազանդավորների բռնագաղթեցումը Թրակիա կատարվել է նաև 970 թ. Չմշկիկ կայսեր կողմից, որի մասին կան միանգամայն

¹ Գր. Բակուրյանի ծագման մասին տե՛ս *Н. Марр*, Аркаун Монгольское название христиан, в связи с вопросом об армянах халкедонитах, отд. оттиск из Виз. Временника, т. XII, СПб, 1905, էջ 17 և հաջորդ, 24:

² Տե՛ս *Theophanis*, Chronographia ed. C. de Boor, t. I, p. 429, նաև *S. Nicephori C. P. breviarium historicum de rebus gestis post imperium Mauricii*. Migne, Patr. graeca, t. 100, col. 976, նաև *Nicephori patriarchae Cr.*, De rebus post Mauricium gestis, M. P. G. t. 100, col. 693.

³ *Vita Sancti Stephani junioris monachi et martyris*, Migne, Patr. graeca, t. 100, col. 1156.

արժանահավատ վկայութիւններ Զոնարասի, Կլիկայի և Աննա Կոմնենայի մոտ: Վերոհիշյալ հեղինակներից այդ գաղթեցման մասին մենք առավել ընդարձակ և հետաքրքիր տվյալների ենք հանդիպում Աննա Կոմնենայի «Ալեքսիական»-ում: Նա հայ աղանդավորների այդ գաղթեցման մասին հիշելիս ասում է. «Պավլիկյանները ամենավայրենի են, բիրտ և վտանգներից չվախեցող: Նրանց Հովհաննես Չմշկիկը, այն հրաշալի կայսրը, պատերազմում հաղթելուց հետո, գերեվարելով Ասիայից, այն է Խալյուրներից և հայկական վայրերից (ἀπό των Χαλύβων και των Ἀρμενιακῶν τόπων) Թրակիա տեղափոխեց և ստիպեց բնակվեն Ֆիլիպուպուլսի շրջակայքում: Այդպիսով, նա մի կողմից նրանց հեռացրեց այն ամենաանառիկ ամրոցներից ու բերդերից, որոնց նրանք տիրում էին բռնութեամբ, փակ մյուս կողմից նա ապահովագույն պահպաններ դարձրեց նրանց սկյութական (իմա՝ սլավոնական) այն արշավանքների դեմ, որոնք հաճախ տեղի էին ունենում բարբարոսների կողմից Թրակիայի շրջանների վրա... Հովհաննես Չմշկիկը մեզ հակառակորդ մանիքեցի՝ աղանդավորներին դարձնելով դաշնակից, կովոդ ուժ ստեղծեց ընդդեմ քոչվոր սկյութերի, որից հետո քաղաքների բնակչութիւնը շուշ քաշեց բազմաթիվ ասպատակութիւններից»:

Ներկա առասպելի մեջ նույնիսկ ակնարկվում են այդ բռնագաղթեցումները, հավանաբար վերջինը: Սատանա Պայլի պայթելուց հետո Հովհան Ոսկերեանը սատանայի երկու աշակերտներին, Շորոնք մարդկանցից էին», ինչպես ասում է առասպելը, տեղափոխում է Թրակիա:

Այդ կասկածութեամբ հետաքրքրական է կանգ առնել մի հարցի վրա: Սատանա Պայլի՝ Թրակիա գաղթեցված աշակերտների անունների վրա: Նրանցից մեկը կոչվում է Սուբոտին, մյուսը՝ Շուտիլ: Յավորսկին այդ կասկածութեամբ գրում է. «Ինչ վերաբերում է, մասնավորապես, սատանայի երկու աշակերտների յուրատեսակ անուններին՝ Սուբոտինին և Շուտինային³, ապա այդպիսիներ տվյալ աղանդի պատմութեան մեջ ոչ նրա հայրենիքում՝ Հայաստանում, ապա նաև ոչ Կոստանդնուպոլսում և ոչ Թրակիայում ու Բուլղարիայում, նույնիսկ մոտավոր համահայտնութեամբ, չեն հանդիպում, այնպես որ, հնարավոր է, նրանք պետք է համարել պարզապես առասպելի կամայական հնարանք»:

Սակայն Յորդան Իվանովը արել է շատ հետաքրքիր ենթադրութիւն, առանց որևէ մեկնաբանման: Նա Սուբոտինի համար անց է կացրել հետևյալ զուգահեռները. «Հայ և պավլիկյան Սմբատը, որը 9-րդ դարում հիմնադրեց ենթադանդ թոնգրակեցիութիւնը», մի զուգահեռ էլ «մանիքեցի Սանտավարինոսը, որը հիշատակվում է 9-րդ դարի մի գրվածքում և որը բուլղարների մեջ տարածեց մանիքեական աղանդը»⁴:

Իվանովի այն ենթադրութիւնը, որ Սուբոտինը կարող է Սանտավարինոսը լինել, որ իբր նա մանիքեցի էր և մանիքեութիւնը տարածել էր

¹ Ինչպես հայտնի է, բյուզանդական հեղինակները պավլիկյաններին հաճախ անվանում են մանիքեցիներ:

² *Annae Comnenae, Alexias, Migne, Patr. graeca, t. 131, col. 1097.*

³ Յավորսկու հրատարակած ձեռագիրը Շուտիլի փոխարեն ունի Շուտինա:

⁴ Ю. Яворский, հիշյալ աշխատութիւնը, էջ 505—506:

⁵ И. Иванов, հիշյալ աշխատութիւնը, էջ 30:

Իուլիանիանյան, իհարկե, ճիշտ չէ: Նախ և առաջ Սանտավարինոսի մասին հիշատակում են նրա բարեկամ Փոտ պատրիարքին (858—867 և 878—886 թթ.) մահացու կերպով ատող հեղինակները, գրխավորապես Նեոկեսարիայի եպիսկոպոս Ստրիլիանոսը: Նա իր մի նամակում՝ ուղղված Ստեփանոս պապին, Սանտավարինոսին անվանում է մանիքեցի¹: Միայն և միայն նա է Սանտավարինոսին անվանում մանիքեցի, իսկ մյուս բոլոր հեղինակները, որոնք նույնպես թշնամարար են տրամադրված դեպի Սանտավարինոսը, այդպիսի բան չեն ասում²: Բայց չէ՞ որ Սանտավարինոսը պատրիարք Փոտի ամենամոտիկ գործիչն է, որի միջոցով նա դառնում է Իարսեղ 1-ին կայսեր (867—886) դորձակալը: Եվ Փոտը, և Բարսեղը, մեկը գրչով, մյուսը սրով կատաղի պայքար են մղել պավլիկյանների դեմ և ինչպե՞ս կարելի է, որ այդպիսի մարդիկ գործակցեին մանիքեցիներին, այսինքն պավլիկյաններին հետ: Բացի այդ բոլորից, Սանտավարինոսը եպիսկոպոս է, մի բան, որ անհնարին է պավլիկյանների մեջ փնտրել: Բյուզանդիայում սովորութուն էր դարձել, որ մի հակառակորդը մյուսին մեղադրեր մանիքեություն մեջ, և Սանտավարինոսի հարցում ևս նույն բանն է տեղի ունեցել:

Միանգամայն հավանական է, որ Սուրբոտինի անվան տակ պետք է հասկանալ Մմրատ (Մմրատն), այսինքն Մմրատ Ջարեհավանցի առաջին թոնդրակեցի աղանդապետը: Բայց ոչ թե այն մտքով, որ Թրակիա է գաղթեցվել Մմրատը, այլ որ Թրակիա են գաղթեցվել թոնդրակեցիները: Ինչպես որ չի եղել սատանա Պայլ, այլ այդ անվան տակ հասկացվել են պավլիկյանները, ապա Սուրբոտինի անվան տակ էլ, հավանաբար, հասկացվել են թոնդրակեցիները: Եթե այդ ենթադրությունը ճիշտ է, ապա դրանից կարելի է անել հետաքրքիր և միանգամայն հավանական ենթադրություններ:

Տիվրիկի՝ պավլիկյան շարժման կենտրոնի կործանումը և պավլիկյան շարժման ճնշումը (որպես զինված ապստամբության, իհարկե, և ոչ որպես աղանդի) տեղի է ունեցել 872 թվականին: Դրանից հետո՝ պավլիկյանները հանդես են գալիս որպես աղանդավորներ, բառի բուն իմաստով, և ոչ թե որպես մարտիկներ՝ հանուն սոցիալական հավասարության: Եվ այդ բոլորից հետո չի կարող չզարմացնել և մտածել չտալ այն փաստը, որ մի ամբողջ հարյուրամյակ հետո՝ Չմշկիկ կայսեր ժամանակ, հանկարծ հանդես են գալիս պավլիկյաններ Խալկոններում և հայկական վայրերում (ἀρμενιαχοὶ τόποι): Այդ «պավլիկյանները» ոչ միայն խաղաղ իրենց աղանդն են պաշտում, այլ նաև տիրում են ամրոցների և բերդերի, զինված դիմադրում են բյուզանդական զորքերին, որոնց առաջնորդում է Հովհաննես Չմշկիկը: Ἀρμενιαχῶν τόπων-ի տակ նախապես ենթադրվում էր Արմենիակոն թեմը, բյուզանդական կայսրության արևելյան շրջաններում: Բայց չէ՞ որ այդ թեմը բյուզանդական է և որ պավլիկյան շարժման ճնշումից հետո անհնարին է, որ պավլիկյանները այնտեղ շարունակեին տիրել բերդերին և ամրոցներին: Պարզ է, որ Աննա Կոնստանտնոպոլիտանի տակ հասկա-

¹ St' u Mansi, Sacr. Conc. nova et amplissima Collectio, Paris—Leipzig, 1902, t. XVI, p. 432.

² St' u A vita, sive certemen sancti patris nostri Ignatii Archiep. Constantinopolitani, Mansi, XVI, col. 285, 289.

ցել է «հայկական շրջանները», այսինքն Հայաստանը, որը հենց այն ժամանակ՝ Չմշկիկի օրոք սկսում է դառնալ Բյուզանդիայի հափշտակողական քաղաքականության շրջանը: Բյուզանդիայի այդ քաղաքականությունը դիմադրում էր ամբողջ հայ ժողովուրդը, նախ և առաջ աշխատավորությունը, որոնց ամենահեղափոխական տարրը թոնդրակեցիներն էին: Չմշկիկի բռնադատվեցրած պավլիկյաններն» էլ, ամենայն հավանականությամբ, թոնդրակեցիներն են, որոնց դիմադրության մասին Աննա Կոմենան հիշատակում է պավլիկյանների անվան տակ:

Այդ տեսակետից միանգամայն ճիշտ է Աս. Մնացականյանի այն կարծիքը, որ թոնդրակյան շարժումը տոգորված էր Հայաստանը բյուզանդական լծից ազատելու ոգով¹: Բայց միաժամանակ ճիշտ է Ա. Բ. Հովհաննիսյանը, երբ առարկում է Աս. Մնացականյանին, գրելով՝ «Իմիջիայլոց չի կարելի համաձայնվել հեղինակի (Աս. Մնացականյանի—Ն. Բ.) կարծիքի հետ, որ թոնդրակեցիների շարժումը ստացավ քաղաքական պայքարի բնույթ միայն այդ մոմենտից (այսինք 1045 թվականից—Ն. Բ.) թոնդրակեցիների ազանդի դրոշի տակ հաճախ ծավալվում էր ոչ միայն սոցիալական, այլև ազգային-ազատագրական պայքարը»:

Թոնդրակեցիները բյուզանդական աղբյուրներում չեն հիշատակվում, և դա չի կարող չզարմացնել, նկատի ունենալով այն փաստը, որ թոնդրակյան ազանդի մասսայական տարածման ժամանակ է, որ սկսվում է Բյուզանդիայի հափշտակողական քաղաքականությունը Հայաստանում: ա՞յ կարելի է բացատրել միայն ու միայն այն հանգամանքով, որ նրանք թոնդրակեցիներին համարում էին պավլիկյաններ և այդ պատճառով պետք է միշտ վերապահությամբ մոտենալ այն պավլիկյաններին», որոնք հիշատակվում են բյուզանդական աղբյուրներում պավլիկյան շարժման ուղղման պարտությունից հետո, 9-րդ դարի վերջում:

Ինչ վերաբերում է սատանա Պայլի մյուս աշակերտի անվանը՝ Շուտիլ, Իվանովը բավարարվում է գրելով, որ Ան-նադիմի կողմից շարադրված մանրփեական վարդապետության մեջ Ադամի և Եվայի որդին կոչվում էր Շատիլ²:

Ինչպես մենք կաշխատենք ցույց տալ, այս ավանդությունը ստեղծվել է ոչ թե հույների, այլ, ննարավոր է, Թրակիայի հայերի մոտ և այդ տեսակետից Շուտիլ անունը չի կարող մեզ չհիշեցնել պավլիկյան ազանդի ծագման մասին հայկական ավանդության մեջ հիշատակվող Շեթի անունը:

Ավանդությունը իր մեջ պահպանել է բազմաթիվ տեղեկություններ, որոնք հաստատվում են ժամանակագիրների և այլ աղբյուրների տվյալներով:

Այսպես, պավլիկյանների կաշին քերթելու մեջ են արտացոլվել այն տմարդի հայածանքները, որոնց ենթարկվում էին ազանդավորները, մի բան, որի մասին վկայում են բոլոր միջնադարյան հեղինակները, որոնք առավել կամ պակաս չափով գրել են պավլիկյանների մասին: Սարույկի

¹ Աս. Մնացականյան, Թոնդրակյան շարժման մի քանի գլխավոր հարցերի մասին, «Տեղեկագիր», 1954, № 3, էջ 78:1

² А. Г. Иоаннисян, Движение тондракидов в Армении (IX—XI вв.). «Вопросы Истории», № 10, 1954, стр. 108, прим. 58.

³ И. Иванов, հիշյալ աշխատությունը, էջ 30:

վրա այրել, ծովում խեղդամահ անել, ցցերի վրա սպանել, սրախողխող անել, ահա տանջամահության ոչ լրիվ պատկերը, որին ենթարկվում էին աղանդավորները:

Առասպելի՝ պավլիկյաններին թվում էր, թե չարչարվում են սրբերի պես՝ արտահայտության մեջ արտացոլվել է պավլիկյանների համոզվածությունը իրենց վարդապետության և պայքարի ճշմարտության մեջ, նրանց պատրաստակամությունը մեռնել, մնալով հավատարիմ իրենց համոզմունքներին¹: Սակայն, տվյալ դեպքում հետաքրքիր է առասպելի մեջ ակնարկվող մի այլ փաստ: Հովհաննեսը պավլիկյանների հալածանքը սկսում է, Բազիկովոյի Բակուրյանի կողմից կառուցված վանքից դուրս գալով: Այդ վանքի հիշատակումը այս կապակցությամբ պատահական չէ:

Բազիկովոյի Պետրիցիոնի վանքի կառուցման ժամանակաշրջանը հայտնի է Բյուզանդիայի համար ներքին և արտաքին անդադար պատերազմներով, որոնց նետկանքով կայսերական դանձարանը մինչև հատակը գատարկվել էր: Ալեքսիոս 1-ին կայսրը (1081—1118) դիմում է ամեն միջոցի փող հավաքելու համար, նա ոչ միայն ձեռք գրեց իր մոր և եղբայրների գանձերի վրա, այլև սուրբ Սոֆիայի ոսկե իրերին: Նա նույնիսկ կեղծեց ոսկե զրամբ, այնքան մեծ կարիք էր զգացվում զրամական միջոցների: Նա սահմանափակեց վանքերի հողային տիրույթները: Այդպիսի պայմաններում միթե պատահական էր Բազիկովոյի վանքի կառուցումը: Բակուրյանը վանքի կանոնագրության առաջարկում ասում է, որ Եկառուցեցի գեղեցիկ տաճար... ուր և հանգստարան իմ մեղավոր ոսկորների համար՝: Հետաքրքրականն այն է, որ Բակուրյանը իր ոսկորների հանգրստարանը կառուցում է, իր իսկ ասելով, «Նիլիպպուպուսի թեմայի հյուսիսային մասում բնակվող իստոլարար ժողովրդի (ἀν' ὄρουτον ἔβλος) մեջ»², այսինքն աղանդավորներով վիտացող շրջանում և ոչ, ասենք, Թեսաղոնիկեի շրջաններում, որտեղ նա հսկայական կալվածների էր տիրում, ուր, իհարկե, ավելի հանդիստ կարող էին մնալ նրա մեղավոր ոսկորները: Վանքի կանոնագրության մեջ գրված է, թե նա «ազատ է ամեն տեսակի հարկերից, լինեն նրանք պետական կամ եկեղեցական (μηδενός τοῦ οἰονοῦν εἶδους εἰσπραξεί υποχρεῖμενη μηδαμῶς βασιλικῆς ἢ πατριαρχικῆς)»³, որ նա ունի ներքին լիակատար ինքնավարություն (ὡς αὐτεξουσίῳ αὐταρχούσῃ αὐτῇ ἐαύτης τῆν χυρίαν ἔχουσα)⁴: Բակուրյանը վանքին նվիրում է անչափ, անհամար հողային տարածություններ, գյուղեր, քաղաքներ, բերդեր, ձկնորսարաններ, որոնց թվարկելը երկար ժամանակ կխլեր մոզանից: Այդ բոլորից բացի, վանքն իրավունք ուներ ներս չթողնել հույներին:

¹ Համեմատիր Պետրոս Սիկիրիացու խոսքերը՝ «նրանք (պավլիկյանները) նախընտրում էին մեռնել մնալով աղանդավոր, քան թե ապաշխարանքով սիրաշահեն աստծուն և ձեռք բերեն հավիտենական փրկությունը»: Migne—Patr. gr. eca, t. 104, col. 120.

² Typicon de Gregoire Pacourianos pour la monastere de Patrizos (Bičkovo) en Bulgarie, ed. Lois Petit, Византийский Временник, приложение к XI тому, вып. 1—2, СПб, 1904, էջ 8, 17.

³ Նույն տեղում, էջ 9, 71:

⁴ Նույն տեղում, էջ 13, 61:

⁵ Նույն տեղում:

Առաջին անգամ Ն. Մառը կասկած հայտնեց այն մասին, թե այդպիսի առանձնաշնորհյալ գրությունը չի կարելի բացատրել միայն ու միայն Գրիգոր Բակուրյանի գեպի Ալեքսիոս կայսրը ունեցած մոտիկությամբ և իր անձնական ծառայություններով, ինչքան էլ նրանք մեծ ու կարևոր լինեին: Մառը հարց է տալիս, թե կայսերական քաղաքականությունը Պետրիցիոնի վանքի վրա արդյոք չէ՞ր գնում հույսեր, այդ վրացական վանքից, որի եղբայրության կազմում գտնվում էին հայ-քաղկեդոնականներ, չէ՞ր սպասում արդյոք օգնություն հայ-պավլիկյանների գեմ պայքար մղելու համար¹:

Մառի հոգիածի լույս ընծայումից կես դար հետո բուլղար պատմաբան Վսեվոլոդ Նիկոլանը գրական պատասխան տվեց Մառի հարցին: Նա իր մի ընդարձակ հոգիածում² փաստացի կերպով ցույց տվեց, որ Պետրիցիոնի վանքը Ֆիլիպպուպոլսում շարունակում էր Ալեքսիոս 1-ինի քաղաքականությունը շրջանի աղանդավորների նկատմամբ, դա Բյուզանդիայի հասար թրակիայի աղանդավորների մեջ հավատադարձության աշխատանք տանող մի կենտրոն էր:

Մեր հին բուլղարական առասպելն, մի առասպել, որի տակ պահպանված է պատմական իրականությունը, անսպասելիորեն մեզ տալիս է այնպիսի փաստ, որը մենք պատմական և ոչ մի աշխատության մեջ չենք հանդիպում: Նա ցույց է տալիս, որ իսկապես Ֆիլիպպուպոլսի Պետրիցիոնի վանքի վրա գրված էր աղանդավոր հայերի գեմ պայքար մղելու պարտականությունը:

Մատանա Պայլի գրքերի կրակ տալը սովորական երևույթ էր աղանդավորական, տվյալ դեպքում պավլիկյան գրքերի համար, մի փաստ, որ հաստատում են ոչ միայն Պետրոս Սիկիլիացին և այլ պատմիչներ, այլև բյուզանդական կայսրների օրենսդրությունը և եկեղեցական կանոնները³:

Առասպելում պահպանվել են բազմաթիվ վկայություններ պավլիկյանների դադափարախոսության վերաբերյալ, նրանց բացասական վերաբերմունքը գեպի եկեղեցական խորհուրդները (տվյալ դեպքում գեպի հաղորդության խորհուրդը), գեպի Աստվածածինը, ինչպես և գրական վերաբերմունքը գեպի Պողոս առաքյալը: Այս առասպելի մեջ արտացոլվել է նաև պավլիկյանների երկվութականությունը (սատանա Պայլի պայթելը, երբ Հովհաննեսն ասում է՝ «մի սուրբ, մի տեր»), մի բան, որ հաստատում են բոլոր պատմական աղբյուրները:

¹ Н. Марр, Аркаун, монгольское название христиан, в связи с вопросом об армянах халкедонитах, стр. 25. также 67.

² В. Николаев, Един феодален институт от XI в, в нашите земи със специално-предназначение. Манастирът на Гр. Бакурияни (Пакуриан) – средище на Византийски прозелитизм между пловдивските армено-павликян. Българска Академия на науките. Известия на института за българска история, № 1-2, София, 1951 г.

³ *Sb' u Petri Sculi* o, c. col. 1277, նաև Ecloga Leonis et Constantini cum appendice, ed. A. Monferratos, Athenis, 1889, tit. XVIII, § LII.

Ավարտելով մեր հոգիվածը, ավելացնենք նաև հետևյալը.

1. Առասպելը բյուզանդական լինել չի կարող. Դա հաստատում է սատանա Պայլի աշակերտներից մեկի անունը՝ Շուտիլ, մի բան, որ ցույց էր տվել դեռևս Յ. Իվանովը: Հունական այբուբենում չկա Շ տառը և հույներ երբեք չի կարող արտասանել այդ:

2. Գեոևս Գալուստ Տեր-Մկրտչյանը նկատել էր, որ Քարաձք Հայքից (այսինքն պավլիկյան և թոնդրակյան աղանդների տարածման շրջաններից) եկած գաղթականների մեջ պահված է երկու փաղաքշական կոչում, որ տրվում է սիրված և չարածճի մանուկներին՝ «չար Հուլիանոս» և ավելի հաճախ գործածված «սատանա Պուլիկ»¹: Գ. Տեր-Մկրտչյանը միանգամայն ճիշտ ենթադրել էր, թե սատանա Պուլիկի տակ պետք է որ հիշատակվեին պավլիկյանները²: Բուլղարական առասպելի սատանա Պայլը չի կարելի շնույնացնել ահա այդ սատանա Պուլիկի հետ, և քանի որ Բուլղարիայից Հայաստան երբևիցե գաղթեցում չէ եղել, այլ եղել է, ընդհակառակը, Հայաստանից Բուլղարիա, ապա այդ առասպելը կարող էր ստեղծվել միայն ու միայն հայերի մեջ, և անհավանական չէ, որ այդ ստեղծված լինի Ֆիլիպպուլուսի Պետրիցիոնի վանքի հայ-քաղկեդոնական հոգևորականության կողմից:

Մեր այս միտքը առավել ևս հաստատում է պավլիկյանների ծագման մասին հայկական ավանդության, ինչպես նաև հին բուլղարական ավանդության վերջին նախադասությունների շջմեցուցիչ նմանությունը: Հայ ավանդությունը վերջանում է. «Եւ եկեալ սուրբ Եփրեմ ոչ կարաց քակել զնա յաղանդոյն և անէծ զնա և զնացս: Բուլղարականում, ինչպես ցույց են տվել, Հովհանն Ռսկերեբանը ևս չի կարողանում մոտավորապես նույն ձևով «քակել» նրանց «յաղանդոյն», նրանց նա պատիժների է ենթարկում, որից հետո ասում է. «Եզովյալ լինեն այդ մարգիկ և նրանց ուսուցիչները: Մեր աստծուն փառք»: Սա, իմիջիայլոց, ցույց է տալիս, որ հայերեն «Գիրք հերձուածոց»-ը, որը մեղ հասել է 1621 թվականին զրված մի ձեռագրով³, շատ ավելի հին է, համեմայն դեպս 12-րդ դարից առաջ է գնում:

Ավելորդ չի լինի ասել, որ առասպելի հեղինակներին, ամենայն հավանականությամբ, ծանոթ էր պավլիկյանների ծագման հունական առասպելը ևս: Սուրբտիների և Շուտիլի իրենց անունները փոխելը և Պողոս ու Հովհաննես անուններ ստանալը համեմայն դեպս այդ է ապացուցում: Ըստ հունական ավանդության, Կալլինիկի որդիների անունները, ինչպես սկզբում ասացինք, Պողոս և Հովհաննես էին:

3. Եվ վերջապես, հետաքրքրականն այն է, որ այդ առասպելի մեջ թոնդրակեցիները համարվել են, և հնարավոր է, որ իրենք ևս իրենց համարում էին, պավլիկյանների աշակերտներ, նրանց գործի շարունակողներ:

¹ Գալուստ Տեր-Մկրտչյան, Հայկականք, ԺԹ. «Արարատ», 1900, մայիս, էջ 270, ծանոթ. 1:

² Նույն տեղում:

³ «Գիրք հերձուածոց», հրտ. Մխաբանի, «Արարատ», 1892, թիւ 2, տարի ԻԵ, էջ 92: